ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» Մայիսի 2026թ. N 68-Լ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ կետով, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի 1-ին հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերությունը և 15-րդ կետը, որակավորման հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 30-ի N 6 արձանագրությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի կողմից 2026 թվականի ապրիլի 15-ին և մայիսի 6-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված քաղաքաշինության բնագավառում նախատեսվող շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող «Այլընտրանքային էներգիայի աղբյուրները» միջոցառման ծրագիրը և ծրագրին շնորհել 10 կրեդիտ:
2. Հաստատել «Այլընտրանքային էներգիայի աղբյուրները» միջոցառման իրականացման ժամանակացույցը՝ համաձայն Հավելվածի:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 1-ին կետով նախատեսված միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Ստորագրող
ԴԱՎԻԹ ԳՐԻԳՈՐՅԱՆ
2102800415

2026-05-13 09:12:48 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2026 թվականի Մարտի 13 **-ի N** 63 **-Ա հրամանի**

«Այլընտրանքային էներգիայի աղբյուրները» միջոցառման ժամանակացույց

Հ/Հ	Ամսաթիվ	Ժամ	Թեմայի անվանում	Միջոցառման պատասխանատու	Դասընթացների անցկացման ձևաչափը և վայրը	Միջոցառման կրեդիտները	Հավաստագրման ենթակա համապատասխան մասնագիտությունը	Մասնակցության վճարի չափը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Մայիսի 16-25	Շաբաթ օրերին ժամը 10:00-ից	Այլընտրանքային էներգիայի աղբյուրները դասախոսություն	Վարդան Համբարյան, Էդուրադ Կուրղինյան	Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան, 10-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, լսարան 10507, 2-րդ մասնաշենք, 2-րդ հարկ, լսարաններ 10504, 10507	10 կրեդիտ	1-ին, 2-րդ և 3-րդ կարգի մասնագետներ **07 -10** մասնագիտություններ	40.000 դրամ